ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը.

Հարություն Վանյան

Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ

Գործուղման վայրը և ժամկետները.

Շվեյցարիայի Համադաշնություն (Բեռն), մայիսի 18-22, 2026 թ.

Հրավիրող կողմը.

Եվրոպայի Խորհուրդ, «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի հրավերով և միջոցներով

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Որպես ազգային համակարգող՝ մանսակցություն «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի ազգային համակարգողների ամենամյա ժողովին:

Քննարկված թեմաները.

Քննարկված թեմաներն են՝

1. 2026 թվականի խորագիրը՝ «Վտանգված ժառանգություն» և այդ համատեքստում գլոբալ մարտահրավերները:
2. Շվեյցարական փորձը մշակութային ժառանգության պահպանության ոլորտում և մի քանի լավ օրինակներ:
3. «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի կոմիտեի ընտրություններ:
4. Թեմատիկ խմբային սեմինար-քննարկումներ երեք հիմնական թեմաներով՝ ծրագրի մարքեթինգ, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում և համայնքների հետ աշխատանք: Ես ընդգրկված էի մարքեթինգի խմբում և մանրամասն ներկայացրի հայկական փորձը:
5. Այց Բալլենբերգ և ծանոթացում Շվեյցարիայի տարբեր գյուղական համայնքներից տեղափոխված հուշարձաններին և այնտեղ պահպանվող արհեստներին:

Մայիսի 21-ին առանձին թեմատիկ սեմինար՝ «Մշակութային ժառանգությունն ու մասսայական մշակույթը» թեմայով: Այս սեմինարը առանձնահատուկ արժեքավոր էր մասսայական մշակույթի օգտագործման միջոցով մշակութային միջոցառումներին նոր այցելուների ներգրավման մեթոդների կիրառման համատեքստում:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հիմնական ելույթները միտված էին «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրում նոր լսարանի ներգրավման կարևորությանը, այդ ուղղությամբ գործիքակազմի ընդլայնմանը, տարբեր երկրներում կիրառվող փորձի փոխանակմանը, ինչպես նաև մշակութային ժառանգության պահպանության վերաբերյալ հիմնախնդիրներին: Առանձին հանդիպում ունեցանք Բեռնի քաղաքապետի, ոլորտի կոլեգաների և պատասխանատուների հետ և արժեքավոր կապեր հաստատեցինք: Ստացված գիտելիքներին ու փորձը կկիրառեմ «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի այս և առաջիկա տարիների կազմակերպչական գործընթացում:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ընդունված որոշումները արձանագրվեցին քվեարկությամբ՝ առաջիկա 2 տարիների համար ընտրվեց կոմիտեի ղեկավար կազմը ազգային համակարգողների շարքից: Պայմանավորվածությունները ևս ընթացիկ բնույթ են կրում՝ նոյեմբերին օնլայն հանդիպում նույն կազմով և 2026 թ. ծրագրերի ամփոփում, 2027 թ. ազգային համակարգողների ժողովի վայրի հստակեցում և այլն:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

«Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի ղեկավարության կողմից առաջարկ ստացա հունիսին Բրյուսելում կայանալիք հնագիտական ժառանգությանը նվիրված աշխատաժողովին ներկայանալ զեկուցմամբ և ծրագրի ներկայացուցիչը: Նախապես հարցը քննարկելով ոլորտը համակարգող նախարարի տեղակալի հետ՝ իմ գոհունակությունն ու համաձայնությունն եմ հայտնել առաջարկի վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ ծրագրին անդամակցում է 48 երկիր և նույնքան ազգային համակարգող՝ մեծ պատիվ է ծրագիրը համաեվրոպական աշխատաժողովին ներկայացնելու թեկնածությունը վստահել ինձ: Աշխատաժողովի մասին առանձին զեկուցագրով կներկայացնեմ մանրամասները:

Ստորագրությունը, ամսաթիվը: 26.05

Պատմության և մշակույթի հուշարձանների
պահպանության վարչության պետ,
«Եվրոպական ժառանգության օրեր»
ծրագրի ազգային համակարգող՝ ***Հարություն Վանյան***